

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/2**

**28 ապրիլի 2015 թ.**

Քննարկվեց «Կոմպլեքս Սերվիս Ֆիրմա» ՍՊԸ 03.04.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 21.01.2015 թ-ի թիվ 71 որոշման դեմ:

«Կոմպլեքս Սերվիս Ֆիրմա» ՍՊԸ կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվել է վարչական բողոք (մուտք ՀՀ ՖՆ 07.04.2015 թ-ի թիվ 14399-15), որով ընկերությունը խնդրել է վերացնել ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 21.01.2015 թ-ի թիվ 71 որոշումը:

Այնուհետև «Կոմպլեքս Սերվիս Ֆիրմա» ՍՊԸ 28.04.2015 թ-ի դիմումով ընկերությունը խնդրել է ՀՀ ՖՆ Էրեբունու ՀՏ պետի 21.01.2015 թ-ի թիվ 71 որոշման դեմ բերված վարչական բողոքը թողնել առանց քննության:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝

...

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Կոմպլեքս Սերվիս Ֆիրմա» ՍՊԸ վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Կոմպլեքս Սերվիս Ֆիրմա» ՍՊԸ 03.04.2015 թ-ի վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

 **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

